ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

16 մայիսի 2018 թվական

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀՐԱԶԴԱՆ 2018

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. *Սույն կանոնակարգը սահմանում է ԿՏՊՔ-ի ուսումնամեթոդական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը:*

*1.2. Ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգը, քննարկում, ընդունում և հաստատում է քոլեջի կառավարման խորհուրդը:*

*1.3. Ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:*

## 2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ

*2.1. ԿՏՊՔ-ի ուսումնամեթոդական խորհուրդը քոլեջում ուսումնամեթոդական հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է , որը կոչված է նպաստելու ԿՏՊՔ-ում տարվող ուսումնական և մեթոդական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:*

*2.2. Ուսումնամեթոդական խորհրդի կազմի մեջ մտնում են փոխտնօրեններ, կաբինետի վարիչներ, ամբիոնի վարիչներ, պրակտիկայի և հեռակա բաժնի վարիչներ՝ 13-ից 15 անդամ, որոնք հրամանագրվում են տնօրենի կողմից՝ յուրաքանչյուր ուս. տարվա համար:*

## 3.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*3.1. Քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը համակարգում է ուսումնական գործընթացը:*

*3.2.Քննարկում և երաշխավորում է՝*

- *Ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը*
- *Գործող և նոր բացվող մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը*
- *Դասավանդման նոր և առաջավոր մեթոդներն ու եղանակները*
- *Ուսումնական գործընթացում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը*
- *Այլ հաստատությունների հետ ուսումնամեթոդական համագործակցության հարցերը*
- *Այլ աշխատանքներ*

## 4.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1.Ուսումնամեթոդական խորհուրդը պարբերաբար, երեք ամիսը մեկ, հրավիրում է նիստեր, որոնցում քննարկում է իր իրավասությանը համապատասխան հարցեր և առաջարկություններ ներկայացնում տնօրենին կամ տնօրինական խորհրդին:

4.2.Ուսումնամեթոդական խորհուրդի նախագահը ի պաշտոնե ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենն է: Խորհուրդը իր անդրանիկ նիստում ընտրում է քարտուղար:

4.3.Ուսումնամեթոդական խորհրդի նախագահը ղեկավարում է խորհրդի ընթացիկ գործունեությունը և վարում նիստերը, իր ստորագրությամբ վավերացնում ուսումնամեթոդական խորհրդից ելնող փաստաթղթերը:

4.4.Ուսումնամեթոդական խորհրդի նախագահը խորհրդի ընթացիկ աշխատանքների մասին զեկուցում է տնօրենին կամ տնօրինական խորհրդին:

4.5. Ուսումնամեթոդական խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից:

4.6.Ուսումնամեթոդական խորհրդի նախագահն ու քարտուղարը իրենց պաշտոններում են մինչև խորհրդի ժամկետի ավարտը, եթե հարկադրական փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանում:

4.7.Ուսումնամեթոդական խորհուրդը հարցեր է քննարկում տնօրենի առաջարկով կամ իր աշխատանքային պլանին համապատասխան:

4.8.Ուսումնամեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք ներկայացվում են աշխատանքային պլանին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:

4.9.Ուսումնամեթոդական խորհուրդն առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացնում քոլեջի տնօրենին կամ տնօրինական խորհրդին:

4.10.Ուսումնամեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին:

4.11.Ուսումնամեթոդական խորհրդի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Գ. Գևորգյան